III
865

2143-ԱԼ

# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

ՍՐԲՈՑ

## ՊԱՏԱՐԱԳԻ՛Ն

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑՒՈՅ·

ԸՍՏ ՕՐԻՆԱԿԻ՛Ն ՏՊԱԳՐԵԼՈՅ
Ի ՀՌՈՎՄ·



ՏՊԱԳՐԵԱԼ
ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1803·
ԵՒ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՄԾԲ.
Ի ԹՐԻԵՍՏ·
Ի Տպարանի Հարց Մխիթարեանց·
Հրամանաւ Մեծաւորաց:

9800-57

# ՕՐՀՆԵՔ ԵՐԳԵՑԵԼՈՑ

## ՍՊԱՍ ԵԿԵՂԵՑՒՈՅ.

Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել, պարտ է այսպէս խորհրդաւոր զգեստաւորիլ։

Մտցէ յաւանդատունն հանդերձ սարկաւագօքն, ուր զգեստքն են պատարագի։ Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր ՚ատճանի, ասասցեն այս սաղմոս ձյն։

Կցուրդ։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Փոխ։

Յիշեա Տէր զԴաւիթ, և զամ հեզութիւն նորա։

Որպէս երդուաւ Տն. և ուխտս եդ Այ Յակոբայ։

Թէ ոչ մտից ՚ի յարկս տան իմոյ. եթէ ելից յանկողինս մահճաց իմոց։

Եթէ տաց քուն աչաց իմոց. կամ՚ նինջ արտևանաց իմոց. կամ հանգիստ երանաց իմոց. մինչև գտից զտեղի յարկի Տեառն Այ Յակոբայ։

Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ. և գտաք զնա ՚ի դաշտս մայրեաց։

Մտցուք ՚ի յարկս նորա. երկիր պագցուք ՚ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա։

Արի Տր ՚ի հանգիստ քո՝ դու և տապանակ կտակի սրբութեան քո։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Վասն Դաւթի ծառայի քո. մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ։

Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ. և ոչ ստեաց նմա. ՚ի պտղոյ որովայնի քո նստուցից յաթոռ քո։

Եթէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ, և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա։

Որդիք նոցա նոցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո։

Հաճեցաւ Տր ընդ Սիոն. եւ ընտրեաց բնակել ՚ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, ՚ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա։

Զկերս սորա օրհնելով օրհնեցից, եւ զաղքատս սորա լցուցից հացիւ։

Երիցանց սորա զգեցուցից զփրկութիւն. եւ սուրբք սորա ցնծալով ցնծասցեն։

Անդ ծագեցից զեղջիւր Դաւթի. պատրաստ արարից ճրագ օծելոյ իմոյ։

Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, այլ ՚ի վր նորա ծաղկեսցի սրբութի իմ։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգ։

Եւ քարոզեսցէ սարկաւագն։

Եւս խաղաղութե զՏր աղա։ Խնդրեսցուք հաւատով միաբանութբ ՚ի Տնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ՚ի վերայ մեր։ Ամենակալ Տր Աճ մեր կեցո՛ եւ ողորմեա։

Եւ ասասցեն երկոտասան Տր ողորմեա։

Եւ քահանայն ասասցէ զաղօթս.

Որ զգեցեալ ես զլոյս որպէս զհանդերձ Տր մեր Յս Քս. անճառելի խոնարհութբ ՚ի յերկրի երեւեցար, եւ ընդ մարդկան շրջեցար։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի, եւ զարդարեցեր զեկեղեցի քո սբ։ Տր ամենակալ որ պարգեւեցեր մեզ զնոյն երկնային հանդերձ զգենուլ, արժանի արա եւ զիս ՚ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ համարձակիմ, եւ մերձենամ ՚ի նոյն հոգեւոր պաշտօն փառաց քոց։ Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որք են հանդերձք պղծութեան, եւ զարդարեցայց լուսով քով։ Ընկեա յինէն զչարիս իմ. եւ թօթափեա զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց հանդերձիւ լուսոյդ առ ՚ի քէն։ Շնորհեա ինձ քահանայական փառօք մտանել ՚ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ՝ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո։ Զի եւ ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստին ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զքեզ Քս որ բարձեր զմեղս ամենեցուն։ Զի դու ես սրբութիւն անձանց մերոց։ Եւ քեզ բարեբարիդ Այ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։

Ամէն։

Աղօթք առ սբ Ածածինն։

Մայր գթութեան եւ ողորմութեան՝ ամենօրհնեալ կոյս Մարիամ. ահաւասիկ ես հեգս եւ անարժան մեղաւորս յամ սրտէ իմմէ, եւ յամ յօժարութե կամօք առ քեզ ապաւինիմ, եւ աղաչեմ զգթութիւն քո. զի զորօրինակ կայիր առ անուշակ Որդւոյդ կախելոյ զխաչէ, նոյնպէս

եւ

և առ ապաշաւ մեղաւորս, և առ նմ քահանայս, որ առ և ընդ նմ եկեղեցիս այսօր պատարագեն, կացցես գթութիւ, զի օժանդակութեամբ շնորհաց քոց կարող լիցուք զարժանաւոր և զընդունելի պատարագս մատուցանել մեծի և անբաժանելի ոյ Երրորդութեանն ։ Ամէն ։

Աղօթք առ Սբն ըստ աւուրն յիշատակի ։

Ո՛վ սր (այս անուն) ահաւասիկ յարդիւնս քո ապաւինեալ մեղաւորս եղկելի՝ մատչիմ պատարագել զքր խորհուրդ մարմնոյ և արեան նն մերոյ Յի Քի, զոր և նուիրեմ ՚ի պատիւ և ՚ի փառս քո ։ Նաև աղաչեմ՝ զքեզ խնամարհարար և եռանդեամբ՝ բարեխօսել այսօր վս իմ, զի կարող եղէց մատուցանել զարժանաւոր և զընդունելի պատարագ. և արժանի լինել ընդ քեզ և ընդ նմ ընտրելոց սց օրհնել զԱծ, և ընդ նմին վայելել զարքայութի երկնից յանվախճան ՚ի կեանս՝ ՚ի յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Գրիգորիոս ԺԳերորդ Պապն շնորհեաց նմ ումք՝ որ զաղօթս զայս ասասցէ նախ քան զպատարագն, Ներողութիւն յիսուն ամաց ։

Ես կամիմ՝ պատարագել՝ և քահանայագործել զմարմին և զարիւն նն մերոյ Յի Քի ըստ արարողութե կաթուղիկէ եկեղեցւոյ. ՚ի փառս և ՚ի գովեստ ամենակալին Այ, և համօրէն դասուց երանելեաց. յօգուտ ինձ՝ և բովանդակ եկեղեցւոյս զինուորելոյ. և վասն ամենեցուն՝ որոց յանձն եղեն ինձ յաղօթս՝ առ հասարակ և առանձինն. և վասն խաղաղութեան հասմէական սբ եկեղեցւոյ ։ Օրհնութի խաղաղութիւ հանդերձ, զուարթութի վարուց, զժամանակ ճշմարիտ ապաշխարութեան, զշնորհս՝ և զմխիթարութի Հոգւոյդ սրբոյ, և զյարատեւութի ՚ի գործս բարութե պարգևեա մեզ ամենակալ և բազումողորմ Տր ։

Սաղմոս ԻԵ ։

Կցորդ ։

Լուացայց սրբութիւ զձեռս իմ. և շուրջ եղէց զսեղանով քո Տր ։

Փոխ ։

Դատեա զիս Տր՝ զի ես յամբծութե իմում գնացի. ՚ի Տր յուսացայ, մի եղէց հիւանդ ։

Փորձեա զիս Տր՝ և քննեա զիս. փորձեա զերիկամունս իմ և զսիրտ իմ ։

Ողորմութի քո Տր առաջի աչաց իմոց. և հաճոյ եղէց ճշմարտութեան քում ։

Ոչ նստայց ես յաթոռս նանրաց. և ընդ անօրէնս ես ոչ մտից ։

Ատեցի ես զժողովս չարաց. ընդ ամբարիշտս ես ոչ նստայց ։

Լուացայց սրբութի զձեռս իմ. և շուրջ եղէց զսեղանով քո Տր ։

Լսել ինձ զձայն օրհնութե քո՝ և պատմել զամ՝ սքանչելիս քո ։

Տր սիրեցի զվայելչութի տան քո. և զտեղի յարկի փառաց քոց ։

դ

Մի՛ կորուսաներ ընդ ամբարշտաց
զանձն իմ. և մի՛ ընդ արս արիւ-
նահեղս զկեանս իմ:
Որոց ձեռք յանօրէնութիւն են,
և աջ նոցա լի է կաշառօք:
Ես յամբծութեան իմում գնացի.
փրկեա՛ զիս Տէր և ողորմեա՛ց ինձ:
Ոտն իմ կացցէ յուղղութիւն. յե-
կեղեցիս մեծս օրհնեցից զքեզ:
Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգ-
ւոյն սրբոյ: Այժմ և:

Եւ մնացեալ սարկաւագունքն
զգեցուցանեն նմա զհանդերձսն
աղօթելով:
Եւ դնէ յառաջ զխոյրն ՚ի գը-
լուխն, և ասասցէ:

Եդիր Տէր սաղաւարտ փրկու-
թեան ՚ի գլուխ իմ, պատերազ-
միլ ընդ զօրութիւն թշնամւոյն:
Շնորհօք Տն մերոյ Յսի Քսի,
որում վայելէ փառք, իշխանու-
թիւն, և պատիւ, այժմ և միշտ,
և յաւիտեանս յաւիտենից:
Ամէն:

Շապիկն:

Զգեցո՛ ինձ Տէր հանդերձ փրկու-
թեան, և պատմուճան ուրա-
խութեան, և շուրջ պատեա զզգե-
ստուս փրկութեան: Շնորհօք
Տն մերոյ Յսի Քսի:

Գօտւոյն:

Շուրջ պատեսցէ կամար հաւա-
տոյ զմէջս սրտի իմոյ, և շիջուս-
ցէ ՚ի նմանէ զխորհուրդս աղ-
տեղիս: Եւ զօրութիւն շնորհաց
քոյ յամենայն ժամ բնակեսցէ
՚ի սմա: Շնորհօք Տեառն մե-
րոյ Յսի Քսի:

Բազպանին:

Տուր Տէր զօրութիւն ձեռին իմոյ,
և լուա՛ զամ աղտեղութիւն իմ,
որպէս կարող լինիցիմ պաշտա-
ւորել քեզ անախտութեամբ հոգւոյ
և մարմնոյ: Շնորհօք Տեառն
մերոյ Յսի Քսի, որում:

Ուրարին:

Զգեցո՛ Տէր պարանոցի իմոյ զար-
դարութիւն, և սրբեա՛ զսիրտ իմ
յամենայն աղտեղութենէ մեղաց:
Շնորհօք Տն մերոյ Յսի Քսի:

Նափորտին, որ է Շուրջառն:

Տէր ողորմութեամբ քով զգեցո՛ ինձ
զգեստ պայծառ, և պարսպեա՛
ընդդէմ ներգործութեան չա-
րին, զի արժանի եղէց փառաւո-
րել զքո փառաւորեալ անունդ:
Շնորհօք Տեառն մերոյ
Յսի Քսի:

Յետ զգեստաւորելոյ սրբազան
զգեստուքն՝ ասէ:

Ցնծասցէ անձն իմ ՚ի Տէր, զի
զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան
և պատմուճան ուրախութեան:
Իբրև փեսայի եդ ինձ պսակ, և
որպէս զհարսն զարդու զարդա-
րեաց զիս: Շնորհօք Տեառն
մերոյ Յսի Քսի:

ՎԱ–

# ԺԱՄԱՄՈՒՏՔ

Ըստ կարգի աւուրց պահոց, տօնից տէրունականաց, և նմ՝ Սրց։

## Պահոց։

Որ ՚ի Հօրէ առաքեցար փրկիչ՝ և մարմնացար ՚ի սրբ Կուսէն. որ փն՟ մեր ՚ի յերկնից իջեր՝ և լուսաւորեցեր զաշխարհս. զխաղաղութի քո տուր մեզ Տր. որ խաղաղութեց ես Թագաւոր, զխաղաղութի. և զողորմութի. որ յամի ես գու_ կարօղ՝ մարդասէր։

## Չորեքշաբթ. և Ուրբաթ։

Որ ըստ ՚նմ՝ մխոս անցանես. զխաղաղութի քո ԱԾ տուր մեզ հանապազ՝ գթեղ աղաչեմք։

## Մարտիրոսաց։

Ի տաճարի սրբոց և յիշատակի սրց մարտիրոսաց գձեռս համ_բարձեալ աղաչեմք. բարեխօ_սութը սոց և աղօթիւք զկենդա_նութիւնս մեր խաղաղացո ԱԾ. որպէս մարդասէր։

## Ճգնաւորաց։

Ճգնաւորք Քի որք տանջա_նաց անօրինացն համբերեցէք. և զմոլութիւն կռոցն խափանեցէք. դասաւորեալք ընդ հրեշտակս ՚ի յերկինս. որք ունիք զհամար_ձակութի ՚ի Քնէ, բարեխօսե_ցէք կեցուցանել զանձինս մեր. զձեզ աղաչեմք։

## Կիրակէի։

Միածին Որդի և բանդ ԱԾ. և անմահ էութի. որ յանձն առեր մարմնանալ ՚ի սրբուհւոյ ԱԾած_նէն և ՚ի միշտ Կուսէն. անփո_փոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քս ԱԾ. մահուամբդ զմահ կո_խեցեր. մինդ ՚ի սրյ Երրորդու_թենէն փառաւորակից ընդ Հօր և ընդ սրյ Հոգւոյն. կեցո զմեզ։

## Ստեփաննոսի։

Ցնծա այսօր՝ ցնծա և զուար_ճացիր կաթուղիկէ ՚որ՝ յիշա_տակաւ սրյն Ստեփաննոսի նա_խավկայեն Քնի՝ վկայեցելոյ Հօր. որ աղօթիւք բանայր զերկինս, զոր փակեաց Ադամ. և հրեշտա_կակերպ տեսլեամբ տեսանէր ըզ_կերպարանն Հօր ՚ի կերպի Ադա_մայ, նստեալ յաթոռ փառաց. որ զբազմութի քարանցն որպ զծա_ղիկս համարելով բոլորէր պսակս փոխանակ փշոցն և եղեգանն։ Եւ զմարտիրոսին արիւնն խառ_նէր ընդ փրկական արեանն Քնի

հո_

հոսեցելոյն 'ի կողէն ։ Մ՚ոյ գերազանցեալ 'ի փառս առաւել քան զամ՛ ոչս՝ հայցեա և մեզ 'ի վերնատունգէն զպարգևս կենաց անվախճանից՝ և զմեծ ողորմութիւն ։

## Ստեփաննոսի ։

Յորովայնէ ընտրեալ՝ սուրբ Ստեփաննոս, յորովայնէ ընտրեալ՝ սուրբ Ստեփաննոս, վկայ Ճշմարիտ առաքելական քարոզութեցն. որ 'ի վերայ անօրէն քարաձգողացն աղօթէիր առ Քս Ա՚ծ՝ մի համարիր սոցա զայս 'ի մեղս. 'ի ձեռն սորին բարեխօսութեն շնորհեա մեզ զմեծ քո ողորմութիւն ։

## Ննջեցեան ։

Ածածին ամէնօրհնեալ, ըղբանն անսկիզբն յղացար, և զԱ՚ծն անբովանդակելին ծնար. զանպարագրելին 'ի գիրկս քո բարձեր, նմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց ։

## Ննջեցեան ։

Ածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց ։ Քանզի սուրբ քերովբէքն բազմաչեայք, և աթոռք հրանիւթք, և վեցթևեան սերովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս զանսպականութիւն 'ի յորովայնի քում ոպ աղախին զՏէր, և ծնար ոպ մարդ զԱ՚ծն բոլորից զմարմնացեալն առ 'ի քէն՝ զանճառ զբանն. 'ի փըրկութիւն աշխարհի և կեանք անձանց մերոց ։

## Ննջեցեան ։

Աղաչեմք զքեզ 'որ կոյս Մարիամ՝ ածածին. բարձրելոյն զօրութեմբն հովանաւորեալ, և 'որ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամ՛ գոյութեանց զստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ 'ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր ։

## Սիմէոնի ։

Ներունէն այսօր Սիմէոն, Հոգւոյն գայր 'ի տաճարն. երեւելով քերովբէիցն վեհագոյն. որոց թևովքն սաւառնեալ ոչ իշխէին նայել 'ի յահեղ փառացն. առ 'ի գիրկս իւր բարձեալ համբուրէր համարձակապէս. և գգուէր ոպ զմանուկ. և աղերսելով հայցէր արձակել 'ի խաղաղութիւն ։

## Տեառնընդառաջին ։

Անսկզբնական բանդ Ա՚ծ 'ի վերջին աւուրս յանձն առեր լինել մարդ 'ի Կուսէն, և արարիչդ յաւիտենից փակեցար 'ի ժամանակս, որ Տր որբութեանց և անկարօտ մաքրութեց. եկիր 'ի տաճարն քառասնօրեայ զօրինացն կատարեցեր զարդարու-

րութիւն․ զոր բարձեալ Սիմէովնի զանպարագրելիդ ՚ի գիրկս իւր՝ հայցէր․ որ արձակիչդ ես կապելոց՝ արձակեա զիս ՚ի խաւարութենէ։ Այս է ծերունւոյն Սիմէովնի վերագոչեմք առ քեզ Տէր․ ով՝ ով՝ ով՝ Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո ՚ի փրկութիւն մեզ՝ Քրիստոս Աստուած․ փառք քեզ։

## Զօրականաց։

Զօրական և վկայ ճշմարիտ՝ քաջ նահատակդ Քրիստոսի սուրբ Թէոդորոս․ որ փոխանակեցեր զմարմինդ ընդ հոգւոյդ քում փրկանս․ և ոչ ածեր զմտաւ զպատճառանս Մաքսիմիանոսի թագաւորին․ այլ վերին ազդեցութեն, դիտելով զպայծառութիւն հոգւոց նոցա․ վառյներեն լուցեր զտաճար կռոց նոցա։ Արդ՝ ՚ի յաղթող պատերազմի առնողացս զոր նահատակութե քո՝ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց։

## Քառասուն մանկանց մարտիրոսաց։

Գնալով փառաց քոց ՚ի փառս՝ կաթուղիկէ Եկեղեցի․ գիմեալք ՚ի Սեբաստիա վերին, ուր թագաւորեալքն յԱյ նահատակին ՚ի յամօթ և ՚ի քարընկեց յերեսս բանսարկուին․ քաջալերելով զմիմեանս, զի մի լուծեղ որ բազմանեօք անցաւորիս պակասեսցի․ այլ գոչելով առաքինաբար զինքն ըղերձեալ յանխուս ածայլն զանձուցն հոլովիցի, աղաղակելով առ Քեզ, ընկալ զորդեգրումն ժողովոյս մերոյ ՚ի յոյս օրհնողաց քոց․ Տէր փառք քեզ։

## Ղազարու։

Ով Ղազարու զննջումն որպէս կանխագէտ յառաջ ասէիր․ զի և ՚ի Բեթանիա յառաջէիր․ զի յարուցես զսիրելին քո․ և քեզ գոչելով ասեմք՝ օրհնեալ որ գաս ՚ի չարչարանս կամաւ Հօր ՚ի փրկութիւն անձանց մերոց։

## Ղազարու։

Յորժամ եկեալ կենարարն ՚ի գերեզմանն Ղազարու՝ յորժամ եկեալ կենարարն ՚ի գերեզմանն Ղազարու՝ աւետաւոր ձայնիւն աղաղակէր ասելով․ Ղազարէ արի եկ արտաքս։ Իսկ մեռեալն ՚ի գերեզմանէն յարեաւ․ և նոյն ինքն զանմահութե պարգեւն ետ սիրելւոյն․ և նովին ձայնիւն ՚ի գերեզմանէն կոչեաց․ վասն որոյ և մանկունք Երուսաղեմայ սաստիւք օրհնէին զանմահ թագաւորութիւն քո․ ովսաննա օրհնեալ է գալուստ քո՝ օրհնութիւն ՚ի բարձունս, օրհնեալ որ գալոցդ ես անուամբ Տեառն։

## Ծաղկազարդին։

Ցնծա՛ Երուսաղէմ, և զարդարեա զառագաստ քո Սիովն․ քանզի ահա Թագաւոր քո Քրիստոս նստեալ

նստեալ 'ի յաւանակի նորոյ հեզութի ցուցանելով գայ մտանէ յառագաստ քո Սիոն. և մեք աղաղակեմք, ովսաննա օրհնեալ եկեալ 'ի յանուն Տն. որ ունի զմեծ զողորմութիւն:

Զատկին:

Քս յարեաւ 'ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց, և յարութիւն իւրով մեզ կեանս պարգևեաց. նմա փառք յաւիտեանս: Ամէն:

Յինանցն:

Ահաւոր և սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ. որ անսկիզբն 'ի Հօրէ անճառաբար մարմնացաւ 'ի Կուսէն, խաչի համբերելով. և կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգևեաց շնորհս:

Յինանցն:

Քանզի յարեաւ 'ի մեռելոց Քն Ած յաւիտենից արարիչ, և յարութի ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւն հրեշտակաց, և նմ՛ զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. փառք սուրբ յարութեան քո Տր:

Համբարձման:

Հիացան վերնական բազմութիւն տեսանելով զքեզ 'ի հրեղէն կառս բազմեալ՝ սարսեալ ասէին, ո՞վ է սա՝ որ զինեալ գայ յԵդովմայ, և եկեալ մտանէ փառօք 'ի փառս. Տէր փառք քեզ:

Համբարձման:

Որ յանպատում յաթոռ նըստիս՝ և յանմարմնոց վերօրհնիս, անհասանելի բանդ Ած. 'ի յերկրի երևեցար ծնմամբ մարդ՝ զանօրէնութեն կատարեալ զխորհուրդ, խաչի և մահու համբերեցեր. և զհրաշալի զյարութիւդ քո ցուցեր հզօր զօրութբ. այսօր համբարձար փառօք 'ի յերկինս, և զկուսածին զմարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր. զոր տեսեալ Ասայիաս՝ նախաձայնեալ ասէր, ո՞վ է սա՝ որ զինեալ գայ յերկրէ. հիացեալ պետութեանց երկնից՝ գոչէին առ միմեանս. համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր, և մտցէ թագաւոր փառաց: Այլ որ յաջմէ կարօղդ ես՝ և հզօր, շնորհեա՛ և մեզ հանդիպել քեզ ամպովք 'ի միւսանգամ՛ քո գալստեանդ. որ միայնդ ես մարդասէր:

Հոգւոյ Գալստեան:

ԱԾ զքեզ խոստովանեմք Սբ Հոգիդ՝ և երկրպագանեմք. որ ես պատճառ կենդանութեան եղելոց՝ և խաղաղարար աշխարհի. որ զտգիտութի աշակերտացն բազում գիտութբ լցեր. և 'ի

՚ի հրեղէն լեզուս բաժանեալ անձառելեօք ցուցար նոցա. աղաչեմք Տէր, խնայեա՛ և կեցո՛ զմեզ ։

**Երկուշաբաթի ։**

Այսօր ՚ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն լուսաւորելով զնոսա. և այժմ աղաչեմք զքեզ. ո՛վ Ս՟Հ՟ որ ես պատճառ կենդանութեան եղելոց և խաղաղարար աշխարհի. խնայեա՛ և կեցո՛ զմեզ ։

**Երեքշաբաթի ։**

Այս և մեք զՀոգին որ ընդ Հօր միաւորեալ, և ընդ Որդւոյ միանական խոստովանիմք. և հայցեմք ՚ի վերնատուողէդ մեզ զհոգևորական զխաղաղութիւնդ. Տէր փառք քեզ ։

**Հռիփսիմեանց ։**

Որք ծագեցան մեզ յարևմտից որպէս զարեգակն. և լուսաւորեցին համանգամայն զաշխարհս Հայաստանեայց, փարատեցին զխաւարն անգիտութեան կռապաշտութեան. և լուսաւորեցին զամ՟ հոգի հաւատով ա՟ծգիտութեան. սոցա բարեխօսութեամբն Քս Ած, պարգևեա՛ աշխարհի քում զխաղաղութիւն. և անձանց մերոց զմեղաց զթողութիւն, որպէս մարդասէր Տէր ։

**Գայիանեանց ։**

Զյաղթական զձեր զհանդէս զուարճացեալ տօնէ եկեղեցի Քի. քանզի սրբութեամբ ստացայք զկուսութիւն. և ՚ի մարմնի զանմարմնոցն ցուցէք զհանդէս ։

**Կուսանաց ։**

Հարսնացեալք Քի երկնաւոր փեսային, զատեալք վերին Սիոնի. խնդրեցէք ՚ի Քէ զհաշտութիւն և զմեծ զողորմութիւն ։

**Յովհաննու Մկրտչին ։**

Զյառաջընթացութիւն քո և զկարապետութիւն Քի բանին խափանել կարծելով. որ ՚ի ձեռն կնոջն զնախատեղծն ՚ի դրախտէն արտաքս ընկեց. նա և այժմ զՀերովդիադա անօրէնութեամբ բորբոքեալ, և բազմելոցն Հերովդեայ զկաքաւս տուեալ աղջկանն հաճոյացոյց, զի զքոյդ հատցէ զգլուխ. որ զամենեցուն ձեռնադրեցեր զգլուխն զՔա ։ Այլ դու, որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա՛ որում ձեռնադրեցեր. պարգևել զխաղաղութիւն և զմեծ զողորմութիւն ։

**Մարգարէից ։**

Տէր՝ որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ՚ի վերայ վիմին հաւատոյ, և կարգեցեր ՚ի սմա առաքեալս և մարգարէս, հովիւս և վարդապետս առ ՚ի հաստատութիւն

թիւն սիրոյ. և ճգնութե՛ վկայից զթշնամին որ վանեցեր. 'ի խաղաղութեան զաս պահեա՛ ԱԾ մր մարդասէր։

Առաքելոց։

Առաքեալք և վկայք Քսի Այ ամենակալ Հոգւոյն զօրութե՛ն զամենեսեան ընդհանուր յորդեգրութի կենաց կոչելով՝ միանական որ Երրորդութեանն յորդորեցին երգել զփառս 'ի յաւիտեանս։ Ամէն։

Հայրապետաց։

Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ 'ի յերկրի. առաքելական աւեր զպատիւ յերկնաւոր՝ ծառայ Քսի ով երանելիդ 'ի հարս որ հայրապետ. քանզի քո վարդապետութեանդ սերմանք բարեպաշտութե բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով. և հաւատացելոցս զփրկութի շնորհելով. վն բարեխօսեա՛ առ Տր վն անձանց մերոց։

Եկեղեցւոյ։

Զխաղաղութիւն շնորհեա՛ եկեղեցւոյ քում սրբոյ. զխաղաղութիւն և զանշարժութիւն 'ի թշնամեաց պատերազմէ. և հաստատեա՛ 'ի մի հաւատ զկաթողիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տր և ԱԾ կեցո՛ զմեզ։

Վարդավառին։

Երևի Տր այսօր աշակերտացն 'ի Թաբօրական լերինն. և աշակերտացն զարհուրեալ աղաղակէին ասելով, արարցուք երիս տաղաւարս. մի Տն, և մի Մովսեսի, և մի Եղիայի։ Եւ մեք բանաւոր հօտքս երգեմք ը̃ քո ճշմարիտ վկայեցդ. առաքեա՛ 'ի մեզ զլոյս քո շնորհացդ 'ի քո միւսանգամ՝ գալստեանդ և կեցո՛։

Խաչի։

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով, և խնդրեմք զթողութի յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութի ազգի մարդկան։ Եւ այժմ վն սոյ տօնային քո նշանի շնորհեա՛ զերկնային զխաղաղութիւն ամ աշխարհի։

Որդւոցն որոտման։

Այսօր ահաւոր ձայնք որոտման հնչեցին յերկնից 'ի յերկրի կոչելով յորդեգրութիւն զձեզ որդիք Սիոնի. հաստատութիւն հաւատոյ, և պարծանք եկեղեցւոյ. որք ցօղով արեան ձերոյ մաքրեցէք զաշխարհս յանօրէն կռապաշտութենէ։ Արդ՝ հայցեցէք 'ի Քսէ զքաւութի տօնողացս անոն ձերոյ. մաղթանօք սոցա Տր խնայեա՛ 'ի փրկեալ քո ժողովուրդս, որ միայն ես մարդասէր։

## Հրեշտակաց ։

Զոր օրհնեն անլռելի ձայնիւ իմանալի զօրութիւնք, երկնաւոր նահապետութիւնք, հրեշտակք՝ և հրեշտակապետք, աթոռք՝ և տէրութիւնք, իշխանութիւնք՝ և պետութիւնք, սերովբէք՝ և քերովբէք զամենասուրբ զԵրրորդութիւն, և զմի աստուածութիւն ։

## Հրեշտակաց ։

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քահանայապետուի ցնծայ հրաշափառապէս զերկնաւոր քահանայապետութեանցն կատարելով զտօնախմբութիւն տօնս, անմարմնական դասուց հոգեղինացդ՝ մարմնականօքս և հողեղէնքս, ով Գաբրիէլ և Միքայէլ մեծք, հրեշտակապետք բարձրելոյն, որք կայք առաջի աթոռոյ ածութեանն. անդադար բարեխօս լերուք վա մեր առ Տր, վերաբերել զամենեսեան ընդ ձեզ յերկնից արքայութիւն, և միաձայն բարբառով երգել զփառս ։

## Գրիգորի Լուսաւորչին ։

Գրիգոր ով քահանայապետ որ զհաւատս ուսուցեր. և զբանակս դիւացն հալածեցեր. մարդկան ուսուցեր քարոզել զԵրրորդութիւնն. պսակեցար յարքայութեանն. արդ բարեխօս լեր առ Տր վա մեր ։

## Երից Մանկանցն ։

Որ ՚ի մէջ քերովբէիցն հանգչիս և ՚ի զօրացն հրեղինաց օրհնաբանիս, իջեր ՚ի Բաբելոն և փրկեցեր զերիս մանկունսն ՚ի հրոյն բռնութէ ։ Որք աղաղակելով գոչէին երգնոր, ամ գործք օրհնեցէք և բարձր արարէք ։ Թագաւոր փառաց Քս և արարիչ բոլորից. որ մարդասիրապէս գթացար ՚ի սուրբ մանկունսն, փրկեցեր ՚ի բորբոքեալ բոցոյն. որք անարգեցին զբռնութի թագաւորին, և չիջուցին զզօրութիւն հրոյն. ընդ նոսին և մեք քեզ վերառաքեմք. փրկեա զմեզ ՚ի հրոյն յաւիտենից ։ Զի դու միայն ես բազմագութ Տէր՝ քեզ փառք յաւիտեանս ։ Ամէն ։



Զայս արասջիք առ իմյ յիշատակի։

Յետ զգենլոյ սրբուն զգեստուցն. եկեսցեն առաջի սրբոյ սեղանոյն։
Եւ քահանայն լուասցէ զձեռս ասելով Սաղմ. ԻԵ.

Լուացից սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղեց զսեղանովք քո Տէր։

Սարկաւագն։

Դատեա զիս Տէր, զի. Եւ այլն. տուն առ տուն զփոխն ՚ի լման։

Քահանայն։

Ի մէջ սրբուհւոյ Աստուածածնին Տէր ընկալ զաղաչանս մեր. և կեցո զմեզ։

Սարկաւագն։

ԶԱստուածածինն և զամ՛ սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ՚ի յերկինս, զի կամեսցի ողորմեսցի, և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Քահանայն։

Ընկալ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սբ Աստուածածնին անարատ ծնողի միածնի Որդւոյ քո. և աղաչանօք ամ՛ սրբոց քոց. (և որոց այսօր է յիշատակ,) լուր մեզ Տէր և ողորմեա, ներեա, քաւեա, և թող զմեղս մեր։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սբ Հոգւոյդ. այժմ, և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Եւ ապա խոնարհեալ պատարագիչ քահանայն առաջի այլոց քահանայիցն առընթեր կացելոցն՝ ասէ։

Խոստովանիմ առաջի Այ, և սրբուհւոյ Աստուածածնին, և առաջի ամ՛ սրբոց, և առաջի ձեր հարք և եղբարք, զամ՛ մեղս զոր գործեալ եմ։ Քանզի մեղայ խորհրդով, բանիւ, և գործով, և ամ՛ մեղօք, զոր գործեն մարդիկ. մեղայ, մեղայ։ Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէք վասն իմ յԱյ զթողութիւն։

Պատասխանեն որք մերձն են ։

Ողորմեսցի քեզ Ա՛ծ հզօրն, և թողութի շնորհեսցէ ամ յանցանաց քոց, անցելոյն, և այժմուս, և յառաջիկայէն փրկեսցէ զքեզ, և հաստատեսցէ յամենայն գործս բարիս, և հանգուսցէ զքեզ 'ի հանդերձեալ կեանսն ։ Ամէն ։

Պատասխանեսցէ և ինքն ։

Ազատեսցէ և զձեզ մարդասէրն Ա՛ծ, և թողցէ զամ յանցանս ձեր ։ Տացէ ժամանակ ապաշխարելոյ, և գործելոյ զբարիս ։ Ուղղեսցէ և զառաջիկայ կեանս ձեր շնորհօքն ամ Հոգւոյն, հզօրն և ողորմածն, և նմա փառք յաւիտեանս ։ Ամէն ։

Դպիրքն ։

Յիշեսջի՛ք զմեզ առաջի անմահ գառին Ա՛յ ։

Քահանայն ։

Յիշեալ լիջիք առաջի անմահ գառին Ա՛յ ։

Դպիրքն ։ Սաղմոս ղթ․ փոխ ։

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր ․ Եւայլն ։

Սարկաւագն քարոզէ ։

Մի՛ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏր, զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ ։ Ամենակալ Տր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛ ։

Քահանայն ։

Ի մէջ տաճարիս և առաջի ածընկալ և պայծառացեալ 'ի նշանացս և սուրբ տեղւոյս, խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք ; զսուրբ զհրաշալի և զյաղթող զյարութիւն քո փառաւորեմք ։ Եւ քեզ մատուցանեմք զօրհնութի և զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սբյ ․ այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Քահանայն, Սաղմ․ խէ․ կց ։

Մտից առաջի սեղանոյ Ա՛յ առ ։

Սարկաւագն ։

Դա՛տ արա ինձ Ա՛ծ ․ Եւայլն ․ տուն առ տուն զփոխն 'ի լման ։

Սարկաւագն քարոզէ ։

Եւ ևս խաղաղութեան զՏր ։
Օրհնեսցո՛ւք զՀայր Տն մերոյ Յսի Քսի, որ արժանի արար զմեզ կալ 'ի տեղւոջ փառաբանութեան, և երգել զերգս հոգեւորս ։ Ամենակալ Տր Ա՛ծ մեր կեցո՛ և ողորմեա՛ ։

Քահանայն ։

Ի յարկի սրբութե, և 'ի տեղւոջ փառաբանութե, հրեշտակաց բնակարանիս, և մարդկան քաւարանիս ․ առաջի ածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք, զքո զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո փառաւորեմք ։ Եւ

քեզ

քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Իսկ եթէ եպիսկոպոս լիցի խորհրդածուն, առցէ զՍր կոնքեան, և ածցէ ՚ի վր լանջացն և զպատուական եմիփորոնն, և եկեսցեն առընթեր ընծայարան սեղանոյն, լուացեալ զձեռս: Եւ մատուցեալ առաջի սեղանոյն, լուռ և անմռունչ ասասցէ զաղօթս առ Տր Հոգին անօրինակ գործոյն:

Ամենակալ Ած բարերար մարդասէր Ած բոլորից, յօրինող երևութից և աներևութից, փրկող և հաստատող, խնամօղ և խաղաղարար Հօր հզօր Հոգի: Հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեան՝ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ. մատչիմք մեծաւ դողութեամբ. առաւել երկիւղիւ, մատուցանել նախ զբանական զայս պատարագ քում անզննին տէրութեանդ, իբր աթոռակցի՝ փառակցի և արարչակցի Հայրենի անկապուտ պատուոյդ, և քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօրդ Էմմանուելի, զքեզ առաքչի, փրկչի, և կենդանատուի, և արարչի ամենայնի: Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւնդ միաբանական աստուածութեդ, յորոց մի և դու ճանաչիս անհաս: Եւ, և ՚ի ձեռն քո առաքինքն նահապետական տոհմին շառաւիղք, տեսանողք անուանակոչեալք, զանցեալսն և զգալոցսն, զեղեալսն և զոչ գոյացեալսն, անսուտ երաբար բարբառով յանի վերապատմեցին: Որ Սր քարոզեալ զքեզ Մովսէսի, որ ՚ի գնալն քո ՚ի վերայ ջուրցն, անպարագիր զօրութիւն, ահեղ շրջապրկութիւն տածողականաւ, թևապարփակ պաշտպանողորէն զթասիրեալ ՚ի ծնունդս նորոգս, զաւազանին խորհուրդ ծանուցեր: Որ կերպարան օրինակութեան՝ նախ քան զկատարեցանել զլուծդ մածուած վերջնում վարագուրիդ, յօրինեցեր կարող տիրապէս զբովանդակ բնութիւս ամենից բնաւից բոլորից գոյից տմ էից՝ յանէից: Եւ անեղծանին ՚ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս առ ՚ի քէն, յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, և օր առաջին երկրին կենդանեաց: Եւ եղ հնազանդեցաւ միութիւն կամացն, ով Հօրն իբրում, ապգակիցն քո, էակիցն Հօր անդրանիկն Որդի՝ մերովս կերպիւ. զքեզ աւետարանեաց Ճշմարիտ Ած Հաւասար և Համագոյ Հօր իւր հզօրի: Զոր առ ՚ի քեզ հայհոյութիւն անքաւելի քարոզեալ. և իբր զանձամարտից զքո հեստեղցն շարաբանական բերանս կարկեաց:

Եւ զիւրն շնորհեաց՝ արդարն և անարատն գառինն ամենայնի՝ որ վասն մեղաց մերոց մատնեցաւ, և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։ Նմա փառք 'ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ Հօր ամենակալի յաւիտեանս յաւիտենից։

Ամէն։

Դարձեալ կրկնեսցէ 'ի նոյն կարգ բանի, մինչև վստահութիւն լուսոյն հրաշափառ յայտնեսցի ազդեալ անտարակուսել միտսին զերկին խաղաղութիւն։

Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ զփառաւորեալ արարչութիւնդ՝ անեղծ և անստեղծ՝ անժամանակ Հոգւոյդ գթածի. որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հեծութեամբ՝ առ ողորմածն Հայր. որ զգիշերն պահես, և զմեղուցելոյն մաքրես, և տաճարս կազմես կենդանիս և կեցուցիչ կամաց բարձրելոյդ Հօր։ Որդ՝ աղաչեմ զմեզ յամ անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քում բնակութեան. և մի շիջցին առ 'ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց իմաստից. վասնզի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խորհելոց։ Եւ քանզի մինչ յԱրբորդուեք պատարագի, և միաւոր ընդունելի՝ համեալ 'ը մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. խոկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթեվանս պատուականս ամենայն պատրաստութիւն 'ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութե ընդունել զսյս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեն։ Եւ հայեսցի 'ի հրոյս յայտնանէ զայթագղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն՝ 'ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամենայնի քոյդ քաղցրեսցի գթութիւն, որպէս Որդւոյդ Մ.՝ Հօրդ քաղցրութի. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութիւն, և զպոռնիկն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արդարոցն երանութեան։ Այժ այժ և ես մի եմ 'ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի. շնորհօք քո ապրեալ, զարեամբ Քրի [illegible] ցեալս։ Զի յայսմ՝ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո մեծութիւնդ, ընդ Հօր փառաւորեալ համապատուարար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութի գովութեան։

Դ. Ձայն։

Զի քո է գթութի, և կարողութիւն, մարդասիրութի, զօրութի, և փառք յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Ապա յարուցեալ եկեսցէ առ ընծայարան սեղանոյն, առ որ մատուցեալ նախատարկաւագն ընդ նշխարն, զոր առեալ քահանայն դիցէ 'ի մաղզմայն, ասելով ։

Յիշատակ Տեառն մերոյ Յսի Քսի ։

Եւ առեալ զգինին արկցէ խաչանիշ 'ի սկիհն ։ Նոյնպէս և սակաւիկ մի ջուր արկցէ, ասելով ։

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տն Այ, և փրկչին մերոյ Յսի Քսի ։

Եւ ասասցէ զաղօթս 'ի ծածուկ Յովհաննու ոսկեբերանին ։

ԱՍՏՈՒԱԾ մեր, որ զերկնաւոր հացդ, զՏր մեր Յս Քս զկերակուր ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար, օրհնել և սրբել զմեզ ։ Նորին և դու Տր օրհնեա և այժմ զառաջադրութիւնս զայս ։ Ընկալ զսա յերկնային քո սեղանդ ։ Յիշեա որպէս բարերար և մարդասէր զմատուցօղս, և վասն որոց մատուցանի ։ Եւ զմեզ անդատապարտ պահեա 'ի քահանայագործութի ածային խորհրդոց քոց ։ Զի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծվայելչութի Հօր, և Որդւոյ, և Հոգւոյդ սրբոյ, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Եւ պօղեսցէ ասելով ։

Տէր թագաւորեաց, վայելչութիւն. եայլն ։

Եւ արկցէ խունկ ասելով ։

Խունկ մատուցանեմ առաջի քո Քս բուրումն հոգեւորական ։ Ընկալ 'ի նոր յերկնային, և յիմանալի քո մատուցարանդ 'ի հոտ անուշից ։ Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս, և զպարգևս Հոգւոյդ սրբոյ ։ Եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Եւ երիցս երկրպագեալ քահանայն, համբուրեսցէ զսեղանն ։ Եւ սարկաւագն կացեալ 'ի մէջ տաճարին, ձայնեսցէ ասելով ։

Օրհնեա Տր ։

Եւ քահանայն 'ի ձայն ասասցէ ։

Օրհնեալ թագաւորութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Եւ սկսցեն այլ եկեղեցականքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն ։

Եւ յաւարտման երգոյն քարոզէ սարկաւագն ։

Եւ ես խաղաղութե զՏր ։

Ժողովուրդն ։ Տր ողորմեա ։

Սար․

Սարկաւագն ։ Կեցո́ և ողորմեա́ ։
Ժողովուրդն ։ Կեցո́ Տէր ։

Սարկաւագն ։ Օրհնեա́ Տէր ։

Եւ քահանայն ասասցէ զաղօթս ։

ՏՐ ԱԾ մեր, որոյ կարողութիւնդ անքննելի է, և փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է, և գթութիւնդ անբաւ ։ Դու ըստ առատ մարդասիրութեան քում, նայեա́ ՚ի ժողովուրդս քո, և ՚ի տաճարս յայս սուրբ ։ Եւ արա́ ընդ մեզ, և ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո, և զգթութիւն ։ Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Քահանայն ասասցէ խորհրդաբար ։

ՏՐ ԱԾ մեր, կեցո́ զժողովուրդս քո, և օրհնեա́ զժառանգութիւնս քո, զլրումն եկեղեցւոյ քո պահեա́, սրբեա́ զսոսա, որք սիրեցին զվայելչութիւն տան քո ։ Դու զմեզ փառաւորեա́ աստուածային զօրութեամբ քով . և մի թողուր զյուսացեալսն ՚ի քեզ ։ Զի քո է կարողութիւն, և զօրութիւն, և փառք, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն ։

Որ հասարակաց զայս, և միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգևել խոստացար ։ Դու և այժմ զծառայից քոց խնդրուածս առ ՚ի յօգուտն կատարեա́, շնորհելով յայսմ՝ յաւիտենիս զգիտութիւն քում ճշմարտութեան, և ՚ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականսն պարգևելով ։ Զի բարերար և մարդասէր ես ԱԾ . և քեզ վայելէ փառք, իշխանութիւն, և պատիւ, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Եւ ապա ասասցի շարական ըստ պատշաճի աւուրն ։ Եւ ՚ի միջի տանն երթիցեն առաջի բեմին, և երկրպագցեն երիցս ։

Եւ քահանայն ասասցէ զաղօթս ։

ՏՐ ԱԾ մեր, որ կարգեցեր յերկինս զդասս, և զզօրութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց ՚ի սպասաւորութիւն փառաց քոց ։ Արա́ այժմ՝ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց, և լինել պաշտօնակից մեզ և փառաբանակից քում բարերարութեան ։

Ի ձայն ։

Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ։ Ամէն ։

Եւ համբուրեսցեն զսեղանն, և յաւարտման շարականին՝ գոչեսցէ սարկաւագն ։

Պռօսխումէ ։

Եւ

Եւ ասասցեն զերեքսրբեանն ձայնիւ :

ՍԲ Ա՟Ծ, ս՟բ և հզօր, ս՟բ և ան_մահ, ողորմեաց մեզ :

Երիցս Կրկնեսցի :

Եւ քահանայն զայս ամէն ասա_սցէ 'ի ծածուկ զաղօթս :

ՍՈՒրբ, որ 'ի սրբս հանգու_ցեալ ես, և երեքսրբեան ձայ_նիւ սերովբէք գովեն զքեզ, և քերովբէք փառաբանեն, և ամե_նայն երկնային զօրութիւնք քեզ երկրպագանեն : Որ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր զամ՟ արարածս : Որ արարեր զմարդն ըստ պատկերի քում, և նմանութեան, և ամ՟ շնորհիւ քով զնա զարդարեցեր, և ուսուցեր խնդրել զիմաստու_թիւն և զգօնութիւն. և ոչ ան_տես արարեր զմեղուցեալն, այլ եդեր 'ի վերայ նորա զապաշխարու_թեան փրկութիւն : Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայսքո 'ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քո, և զօրինաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ : Դու Տէր ընկա՛լ 'ի բե_րանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս, և պահեա՛ զմեզ քոյին քաղցրութեամբդ : Թող մեզ զամենայն յանցանս մեր զկամայս և զակամայս : Սրբեա՛ զհոգիս ըզ_մտաս և զմարմինս մեր. և շնորհեա՛ 'ի սրբութեան պաշտել զքեզ զամ՟ աւուրս կենաց մերոց. բարեխօ_

խօ

սութբ սրբուհւոյ Ա՟ծածնին, և ամենայն սրբոց քոց, որք յաւի_տենից քեզ բարեհաճեցան : Զի սուրբ ես Տր Ա՟Ծ մեր, և քեզ վայել է փառք, իշխանութիւն, և պատիւ այժմ, և միշտ, և յաւի_տեանս յաւիտենից : Ամէն :

Եւ սարկաւագն քարոզեսցէ :

Եւ եւս խաղաղութե զՏր աղա :
Վ՟ն խաղաղութեան ամենայն աշխարհի :

Սարկաւագն ձայնեսցէ :

Օրհնեա՛ Տր :

Եւ քահանայն բազկատարած ա_սասցէ 'ի ծածուկ զաղօթս :

ՏՐ ած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերըն_կալցիս, և ողորմեսցիս ըստ մե_ծի ողորմութեան քում : Զգը_թութիւն քո առաքեա՛ 'ի վերայ մեր և 'ամ՟ ժողովրդեանս, որք ակնու_նէինս 'ի քէն առատ ողորմութեանդ :

Ի ձայն :

Զի ողորմած և մարդասէր ես Ա՟Ծ գոլով. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե_նից : Ամէն :

Եւ քահանայն նստցի յաթո_ռանն : Եւ սկսցին սաղմոս, կց : ըստ խորհրդոյ աւուրն : Եւ ըն_թերցցին զգիրս մարգարէականս, և առաքելականս : Եւ զկնի ա_լէ_

լէլու ՚ի ցուցանելոյ ընթերցուածոյն : Եւ յաւարտմանն՝ սարկաւագն բարձր ձայնիւ գոչեսցէ :

## Օրթի :

Քահանայն դարձցի ՚ի խորանէն, և խաչակնքեսցէ ՚ի վերայ ժողովրդեանն. և ասասցէ :

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան :
Ժղ. վդ : Եւ ընդ հոգւոյդ քում :
Սրկգն : Երկիւղածութ՟ լուարուք :

Սարկաւագն :

Սրբոյ աւետարանիս որ ըստ Մատթէոսի :

Ժողվդն : Փառք քեզ Տր ԱԾ մեր :
Սրկգն : Պռոսխումէ :
Ժողվդն : Ասէ Աստուած :

Եւ սարկաւագն ընթերցցի զաւետարանն. և յաւարտն ասասցեն ամենեքեան :

Փառք քեզ Տր Աստուած մեր :

Եւ ասասցեն զՀաւատամքն :

Հաւատամք ՚ի մի ԱԾ Հայրն ամենակալ՝ արարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից : Եւ ՚ի մի Տր Յս Քս զՈրդին Աստուծոյ, ծնեալ յԱյ Հօրէ միածին, նախ քան զամ յաւիտեանս : ԱԾ յԱյ, լոյս ՚ի լուսոյ, ԱԾ ճշմարիտ, յԱյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած : Նոյն ինքն համագոյակից Հօր, որով ամ ինչ եղև յերկինս և ՚ի վր երկրի՝ երևելիք և աներևոյթք : Որ յաղագս մեր մարդկան՝ և վասն մերոյ փրկութեան իջեալ ՚ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ Կուսէն՝ Հոգւովն սրբով : Որով էառ մարմին հոգի և միտ, և զամ որ ինչ է ՚ի մարդ ճշմարտապէս, և ոչ կարծեօք : Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ՚ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր : Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս : Որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան : Հաւատամք և ՚ի սբ Հոգին յանեղն և ՚ի կատարեալն, որ ՚ի Հօրէ և յՈրդւոյ բղխի : Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս : Որ էջն ՚ի Յորդանան, քարոզեաց զառաքեալսն. և բնակեցաւ ՚ի սուրբս : Հաւատամք և ՚ի մի միայն ընդհանրական և առաքելական սբ եկեղեցի : Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ՚ի քաւութիւն, և ՚ի թողութիւն մեղաց : Ի յարութիւն մեռելոց : Ի դատաստանն յաւիտենից հոգւոց, և մարմնոց : Յարքայութիւնն երկնից : Եւ ՚ի կեանսն յաւիտենականս :

Իսկ որ ասենն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի. կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սբ Հոգին : Կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին ԱՅ, և կամ զսբ Հոգին : Եւ թէ փոփոխելի են՝ կամ այլայլելի,

զայն-

գայնմիսխան նզովէ կաթուղիկէ առաքելական եկեղեցի։

Լուսաւորչին։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պագանելով սոյն Երրորդութեան, և մի ածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Ժողովուրդն։ Ամէն։

Եւ սարկաւագն քարոզեսցէ ՚ի ձայն։

Եւ եւս խաղաղութե զՏր աղա։

Ժողովն։ Տէր ողորմեա։

Սրկզն։ Եւ եւս հաւատով։

Մինչ նորա երգեն, քահանայն զաղօթս ասէ ՚ի ծածուկ։

ՏԷՐ մեր և փրկիչ Յս Քս, որ մեծ ես ողորմութի, և առատ պարգևօք բարերարութե քո։ Որ դու քոյին կամաւ ՚ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց, խաչի, և մահու՝ յաղագս մեղաց մերոց. և պարգևեցեր առատապէս զպարգևս Հոգւոյդ սրբոյ երանելեաց առաքելոցն։ Հաղորդս արա և զմեզ Տր, աղաչեմք զքեզ՝ ածային պարգևացդ. թողութե մեղաց, և ընդունելութե Հոգւոյդ սրբոյ։

՚Ի ձայն։

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Խաղաղութի ✠ ամենեցուն։

Խաղաղութի քով Քս փրկիչ մեր, որ ՚ի վեր ես քան զամ միտս և զբանս՝ ամրացո զմեզ, և աներկիւղ պահեա յամ չարէ։ Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով և ճշմարտութի քեզ երկրպագանեն։ Զի ամենասուրբ Երրորդութեդ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։

Ամէն։

Օրհնեալ Տր մեր Յս Քս։

Ժողովուրդն։ Ամէն։
Սարկաւագն։ Օրհնեա Տր։

Քահանայն

ՏԷՐ Ած օրհնեսցէ ✠ զամենեսեանս։

Սարկաւագն։ Սաղմոս ասացէք։

Սրբասացութի ըստ խորհրդեան աւուրն։

Յետ որոյ սարկաւագն ձայնեսցէ։
Մի ոք յերախայից, մի ոք ՚ի թե։

Դպիրքն եղանակեսցեն։
Մարմին տէրունական, և այլ։

Եւ ապա եղանակեսցեն։
Որք ըստ քրովբէից։

Եւ ՚ի սարկաւագացն վերաբերեսցի սրբազան հացն, և օրհնութի բաժակին ՚ի մէջ սեղանոյն։

Եւ

Եւ մինչ նք երգեսցեն, քահա-
նայն խոնարհեսցի առաջի սրբոյ
սեղանոյն, և խորհրդաբար աղօ-
թեսցէ 'ի ծածուկ ։

Ոչոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք և ցանկութեամբ մատչել 'ի սեղան քո, կամ՝ սպասաւորել արքունական փառաց քոց. քանզի պաշտել զքեզ՝ մեծ և ահաւոր երկնաւոր զօրութեանցդ իսկ է ։ Սակայն վասն անչափ բարերարութե քո՝ անպարագրելի Բանդ Հօր եղեր մարդ, և քահանայապետ մեր երևեցար ։ Եւ իբր Տր ամենեցուն այսմ՝ սպասաւորութե և անարիւն զենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ ։ Զի դու ես Տր Ած մեր, որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց ։ Որ 'ի վր քերովբէական աթոռոյ բազմիս՝ սերովբէից Տր, և թագաւոր Իէլի ։ Որ միայն սբ ես, և 'ի սբս հանգուցեալ ։ Աղաչեմ զքեզ միայն բարերար, նայեա՛ յիս 'ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո, և սրբեա՛ զհոգի և զմիտս իմ՝ յամ՝ պղծութէ չարէն ։ Եւ բաւականացո՛ զիս զօրութբ սբ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքահանայականս շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս, և քահանայագործել զքո անարատ մարմինդ, և զպատուական արիւնդ ։ Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ՝ մաղթեմ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի՛ մերժեր զիս 'ի ծառայից քոց ։ Այլ արժանի՛ արա մատուցանել քեզ զընծայս զայս յինէն 'ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ ։ Զի դու ես՝ որ մատուցանես, և մատչիս, և ընդունիս, և տաս Քս Ած մեր ։ Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկիզբն Հարբդ. և ամենասուրբ և բարերար Հոգւովդ, այժմ՝, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Եւ ընծայքն վերաբերեսցին 'ի
սեղանն սբ. և քահանայն խոն-
արհեսցէ 'ի վերայ սեղանոյն. և
ըռնասցէ զձեռս ասելով ։

Լուացայց սրբութբ զձեռս ։

Եւ քարոզեսցէ սարկաւագն ։
Եւ ես խաղաղութե զՏր ։
Ժողովուրդն ։ Տր ողորմեա ։
Սարկաւագն ։ Եւ ես հաւա ։

Քահանայն՝ թէ սարկաւագ կայ-
ցէ 'ի խորհրդեանն, մինչ նա ըզ-
քարոզն ասիցէ, համբուրեսցէ
զսեղանն, և խաչակնքեալ ✠ ըզ-
ժողովուրդն, բազկատարած կայ-
ցէ առաջի սեղանոյն, և ասասցէ
'ի ծածուկ զաղօթս ։

ՏՐ Ած զօրութեց, և արարիչ ամ՝ լինելութեց, որ յանէութենէ զընաւս 'ի ցուցակութի ածեալ գոյացուցեր ։ Որ և զմեր հողեղէն բնութիւ՝ այսպիսի ահաւոր, և անպատում՝ խորհրդոյ կարգեցեր սպասաւորս ։ Դու Տր՝ որում՝ պատարագեմք զպատարագիս, ընկա՛լ առ 'ի

մէնջ զառաջադրութիւնս զայս: Եւ աւարտեա զսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան Միածնի քո: Տուր թողութիւն մեղաց պարգևեա՛ ճաշակողացս զհացս զայս և զբաժակս:

Ի ձայն:

Շնորհօք և մարդասիրութեամբ Տն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր՝ միանգամայն և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան:

Ժողովուրդն: Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկգն: Ողջոյն տուք միմեանց:

Եւ համբուրեսցեն զսեղանն, և զմիմեանս:

Ձայնեսցէ սարկաւագն:

Ահիւ կացցուք, երկիւղիւ:
Դպիրքն: Առ քեզ Ած:
Սրկգն: Պատարագ Քս մատչի:
Դպիրքն: Ողորմութի և խա:

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ 'ի վր ժողովրդեանն, և ասասցէ:

Շնորհք, սէր, և աստուածային սրբարար զօրութիւն Հօր և ✠ Որդւոյ և Հոգւոյն սրբոյ եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Ժողովուրդն: Ամէն. Եւ ընդ հոգւոյդ:
Սրկգն: Ի վեր ընծայեցուցէք:



Դպիրքն: Ունիմք առ քեզ Տր:
Սրկգն: Եւ գոհացարուք:
Դպիրքն: Արժան և իրաւ:

Քահանայն ձեռնամած աղօթեսցէ 'ի ծածուկ:

Արժան է ստուգապէս և իրաւ ամենայորդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զքեզ Հայր ամենակալ: Որ զքո անքննելի և արարչակից բանիւդ զանիծիցն բարձեր զխափանսն: Որ ժողովուրդ իւրեան առեալ զեկեղեցի սեպհականեաց զհաւատացեալս 'ի քեզ: Եւ զմարմնով բնութեամբ 'ի կուսէն տնտեսութեամբ հաճեցաւ բնակիլ 'ի մեզ: Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ զերկիրս երկին արար: Սանզի որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք 'ի փայլակնացայտ, և յանմատոյց լուսոյ աստուածութեանդ, եղեալ այդպիսի մարդ յաղագս մերոյ փրկութեան, շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս:

Ի ձայն:

Եւ ընդ սերովբէսն, և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին, և ասել.

ՍԲ Սբ Սբ Տր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո, օրհնութիւն 'ի բարձունս: Օրհնեալ որ եկիր և գալոց ես անուամբ Տն, ովսաննա 'ի բարձունս:




Մատոյց զանձն անարատ պատարագ Այ:



Քահանայն բազկատարած աղօթեսցէ 'ի ծածուկ, մինչ՝ նոքա երգեսցեն։

Սուրբ Տէր որ ես ճշմարտապէս և ամենասուրբ, և ո՛վ որ պանծասցի բովանդակել բանիւ զառ 'ի մեզ զանբաւ բարերարութեանց զեղմունս։ Որ և անդէն իսկ 'ի նախնումն զանկեալն ընդ մեղօք՝ զանազան եղանակօք խնամելով մխիթարեցեր մարգարէիւք, օրինացն աւանդութեամբ, քահանայութեամբ, և աւետաբերական երինջոցն մատուցմամբ։ Իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզելով զդատակնիքս. ետուր մեզ զՈրդիդ քո միածին՝ պարտապան և պարտս, զենումն և օծեալ, գառն և երկնաւոր հաց, քահանայապետ և պատարագ։ Զի նոյն ինքն բաշխի 'ի մէջ մերում միշտ անծախապէս։ Քանզի եղեալ ճշմարտապէս և ոչ կարծեօք մարդ, և անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յածածնէն և 'ի սրբոյ կուսէն Մարիամայ։ Ճանապարհորդեաց ընդ ամ՝ կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց. և յաշխարհակեցոյց և յաւիտեան փրկութեան մերոյ եկեալ կամաւ 'ի խաչն։

Առեալ զհացն 'ի սուրբ՝ յանմահ՝ յանարատ՝ և 'ի պատուական ձեռս իւր. Օրհ✠նեաց, գոհացաւ, եբեկ, ետ իւրոց ընտրեալ՝ սուրբ՝ և բազմական աշակերտացն՝ ասելով։

Առէք կերէք.

**այս է մարմին իմ,**

Որ վասն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

Նոյնպէս և զբաժակն առեալ. Օրհ✠նեաց, գոհացաւ, էարբ, ետ իւրոց ընտրեալ՝ սուրբ՝ և բազմական աշակերտացն՝ ասելով։

Արբէք 'ի սմանէ ամենեքեան.

**այս է արիւն իմ Նորոյ ուխտի, որ յաղագս ձեր, և բազմաց հեղանի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։**

Եւ զայն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդին քո միածին։ Եւ իջեալ 'ի ստորին վայրս մա-

եր

հու՝ մարմնովն՝ զոր 'ի մերմէս ըն-
կալաւ յազգակցութէ։ Եւ զնիզա
գժոխոցն աղարտեալ հզօրեղա-
պէս, զքեզ միայն ծանոյց մեզ
ճշմարիտ Ա՛Ծ, զԱ՛Ծդ կենդա-
նեաց և մեռելոց։

Եւ առեալ զընծայս 'ի ձեռն
ասասցէ 'ի ցած։

Եւ արդ՝ մեք Տ՛ր ըստ այսմ հրա-
մանատրութե՝ յառաջ բերեալ
զայս խորհուրդ փրկական մարմնոյ
և արեան միածնի քո։ Յիշեմք
զդորս՝ որ վասն մեր զփրկա-
գործ չարչարանսն, զկենդանա-
տու խաչելութին, զերեքօրեայ
զթաղումն, զերանելի յարու-
թիւնն, զածապէս համբար-
ձումն, զնստելն ընդ աջմէ քո
Հայր, զահաւոր և զփառաւո-
րեալ զմիւսանգամ գալուստ
խոստովանիմք և օրհնեմք։

Եւ գիցէ զընծայսն 'ի վերայ սեղա-
նոյն, և ասասցէ 'ի ձայն։

Եւ զքոյս 'ի քոյոց քեզ մատու-
ցանեմք, ըստ ամի, և յաղագս
ամենեցուն։

Դպիրքն։ Յամի օրհնեալ ես։

Մ՛ինչ՛ն՛ք երգիցեն՝ քահանայն
բազկատարած աղօթեսցէ 'ի
ծածուկ։

Զքեզ արդարև Տ՛ր Ա՛Ծ մեր
գովեմք, և զքեն գոհանամք հա-
նապազ։ Որ զանց արարեր զմերով
անարժանութիւս, այսպիսի ա-
հաւոր և անպատում խորհրդոյ
կարգեցեր սպասաւորս։ Ոչ յա-
ղագս մերոյ ինչ բարեգործութե՝
յորոց յոյժ թափուր եմք և միշտ
ունայն գտանիմք հանապազ։
Այլ 'ի քո բազմացեղ ներո-
ղութիդ ցանկ ապաւինեալ՝ հա-
մարձակիմք մերձենալ 'ի սպա-
սաւորութի մարմնոյ և արեան
միածնի քո Տ՛նդ մերոյ և փրկչիդ
Յ՛ի Ք՛ի։ Որում վայելէ փառք
իշխանութի և պատիւ, այժմ
և միշտ, և յաւիտեանս յաւիտե-
նից։ Ա՛մէն։

Խաղաղութի ✠ ամենեցուն։

Սրկ՛ն։ Ա՛յ երկիրպագես։
Ժ՛ղվ՛րդն։ Առաջի քո Տ՛ր։

Քահանայն խոնարհեսցի և
ասասցէ։

Երկիրպագանեմք և աղաչեմք,
և խնդրեմք 'ի քէն բարերար Ա՛Ծ՝
առաքեա 'ի մեզ, և յառաջի ե-
դեալ յընծայս յայս զմշտնջե-
նաւորակից քո, և զէակից ս՛ր
Հոգիդ։

Եւ կանգնեալ խաչակնքեսցէ զըն-
ծայսն՝ ասելով 'ի ցած։

Որով զհաց օրհ✠նեալ մարմին
ճշմարտապէս արարեր Տ՛ն մերոյ
և փրկչին Յ՛սի Ք՛սի։
Որով զհաց օրհ✠նեալ մարմին
ճշմարտապէս արարեր Տ՛ն մերոյ
և փրկչին Յ՛սի Ք՛սի։
Որով զհաց օրհ✠նեալ մարմին
ճշմարտապէս արարեր Տ՛ն մերոյ
և փրկչին Յ՛սի Ք՛սի։
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն
ստուգապէս արարեր Տ՛ն մերոյ
և փրկչին Յ՛սի Ք՛սի։
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն

ստու-

ստուգապէս արարեր Տն մերոյ և փրկչին Յսի Քսի :

Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստուգապէս արարեր Տն մերոյ և փրկչին Յսի Քսի :

Որով զհաց և զգինի օրհ✠նեալ մարմին և արիւն ճշմարտապէս արարեր Տն մերոյ և փրկչին Յսի Քսի՝ փոխարկելով Հոգւովդ քով սրբով :

Երեք անգամ կրկնեսցէ զաղօթս:
Եւ սարկաւագն 'ի ցած, Ամէն :
Եւ քահանայն ասասցէ 'ի ձայն :

Որպէս եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութի 'ի քաւութի, և 'ի թողութի մեղաց :

Եւ ապա տարածեալ զձեռս աղօթեսցէ 'ի ծածուկ :

Սովաւ շնորհեա՛ զսէր զհաստատութի, և զըղձալի զխաղաղութի ամ աշխարհի. սրբոյ եկեղեցւոյ, և ամ ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, թագաւորաց աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց, կալանելոց, վտանգելոց, աշխատելոց, և որք 'ի պատերազմունս բարբարոսաց :

Սովաւ և օդոց շնորհեա՛ զբարեխառնութի, և անդոց զպտղաբերութի, և ախտացելոց 'ի պէսպէս ցաւս փութապէս զառողջութի :

Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն 'ի Քս ննջեցեալսն՝ զեպիսկոպոսունս՝ զերիցունս՝ զսարկաւագունս՝ և զբնաւ ուխտ եկեղեցւոյ քումոյ, և զամենեսեան՝ որք

յաշխարհական կարգէ զարս և զկանայս հաւատով վախճանեալս :

Ի Ձայն :

Ընդ որս և մեզ այց արասցես՝ բարերար Ած աղաչեմք :

Դպիրքն : Յիշեա՛ Տր և ողորմեա՛ :

Քահանայն :

Ածածնին սրբոյ կուսին Մարիամու, և Յովհաննու Մկրտչին, Ստեփաննոսի նախավկային, և ամ սրբոց՝ եղիցի յիշատակ 'ի սբ պատարագս աղաչեմք :

Դպիրքն : Յիշեա՛ Տր և ող :

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն՝ ձեռնամած ասասցէ :

Առաքելոց սրբոց, մարգա :

Եւ մինչ սարկաւագն զքարոզն ասիցէ, քահանայն զաղօթս սկսանի. զի 'ի միասին աւարտեսցեն :

Յիշեա՛ Տր և ողորմեա՛, և օրհնեա՛ զսր կաթուղիկէ և առաքելական եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քո, և ազատեցեր խաչիւն սրբով. շնորհեա՛ սմա զանշարժ զխաղաղութի :

Յիշեա՛ Տր և ողորմեա՛ և օրհնեա՛ զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ հատանեն 'ի մեզ զբանն ճշմարտութեն :

Աստ յետ յիշելոյն զՊապն, յիշեսցէ և զառաջնորդն տեղւոյն ըստ պատշաճի՝ և պատուոյն: Իսկ եթէ իցէ հերետիկոս, կամ հերձուածող՝ ոչ երբէք, և ոչ ուրեք յիշեսցի: Իսկ եթէ իցէ ուղղափառ՝ յիշեսցի միայն 'ի թեմի, և 'ի վիճակի իւրում, և ոչ երբէք արտաքոյ նորին:

Դ Ձայն ։

Եւս առաւել զսրբազան Պապն մեր՝ զՏէր այս անուն. և զպատուական պատրիարգն մեր՝ զՏէր այս անուն ։ Նաև զարքեպիսկոպոսն մեր՝ զՏէր այս անուն ։ Նաև զեպիսկոպոսն մեր՝ զՏէր այս անուն ։ Շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութիւն ։

Եւ ասա 'ի ձախակողմն սեղանոյն քարոզեսցէ սարկաւագն ձայնիւ աղօթից ։ Օ.որ մի ոք մնայածին կարծելով շրջեսցէ, զի մեծին Խոսրովու է տասցեալ շառաւիղնոց օրինացն ։

Գոհութիւն և փառաբանու ։

Եւ ընդ սկսանել սարկաւագին զքարոզս, քահանայն զաղօթս սկսցէ, զի 'ի միասին աւարտեսցեն ։

Յիշեա Տէր և ողորմեա և օրհնեա զքո առաջի կացեալ ժողովուրդս, և զպատարագիս մատուցողս, և պարգևեա մեզ զպիտոյսն և զօգտակարսն ։

Յիշեա Տէր և ողորմեա և օրհնեա զուխտաւորս և զպտղաբերիչս եկեղեցւոյ քո սրբոյ, և որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ. և հատո՛ նց զպարտսն նց՝ ը ընդարձակ առատութեան քո՝ հարիւրապատիկ աստ՝ և 'ի հանդերձելումն ։

Յիշեա Տէր և ողորմեա, և գթա 'ի հոգիս հանգուցելոցն, հանգո՛ զնոսին, և լուսաւորեա, և դասաւորեա ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից, և արժանի արա ողորմութե քում ։

Յիշեա Տէր և զհոգի ծառայի քո. այս անուն. և ողորմեա նմա ըստ մեծի ողորմութեան քում, և հանգո՛ այցելութբ 'ի լոյս երեսաց քոց. և եթէ կենդանի է, փրկեա զնա յամ որոգայթից հոգւոյ և մարմնոյ ։

Յիշեա Տէր և զայնոսիկ՝ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս զկենդանիս և զհանգուցեալս. կատարեա զկամս հայցմանց նց և զմերս՝ ը ուղղորդն, և որ լին է փրկութե ։ Եւ վարձատրեա բոլորեցունց զանանց և զերանելի բարութենդ ։ Եւ զտեսեալ զնորհուրդս մեր տաճարացս յընդունականութի մարմնոյ և արեան միածնի քո Տն մերոյ և փրկչին Յսի Քսի ։ Ընդ որում քեզ Հօր ամենակալի՝ հանդերձ կենդանարար և ազատիչ սուրբ Հոգւովդ՝ վայելէ փառք իշխանութի և պատուի, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ զժողովուրդն՝ ասելով բարձր ։

Եւ եղիցի ողորմութիւն մեծին Այ. և փրկչին մերոյ Յսի Քսի ընդ ձեզ՝ ընդ ամենեսեան ։

Դպիրքն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։
Սրկգն ։ Եւ ես խաղաղութե ։
Դպիրքն ։ Տէր ողորմեա ։
Սրկգն ։ Ամ սրբովք զորս ։

Եւ

Եւ անդէն ընդ քարոզութեանն՝ քահանայն բազկատարած խորհրդաբար աղօթեսցէ 'ի ծածուկ։

ԱԾ ճշմարտութեան, և Հայր ողորմութեան գոհանամք զքէն. որ 'ի վեր քան զերանելին նահապետացն՝ զմեր պարտաւորեցելոցս տուեալ մեծարեցեր զնորութիւն։ Զի նոցա ԱԾ կոչեցար, իսկ մեզ Հայր հաճեցար անուանիլ գթալով։ Եւ այժմ Տէր աղաչեմք զքեզ՝ զայսպիսի առ 'ի քէն զնորոգ և զպատուական անուանադրութեանս շնորհ որ ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո 'ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ։

Ի ձայն։

Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ երկնաւորդ Հայր, երգել և ասել։

Եւ ժողովուրդքն բազկատարած եղանակեսցեն։

Հայր մեր, որ յերկինս ես։

Եւ մինչ նք երգեսցեն՝ քահանայն աղօթեսցէ 'ի ծածուկ։

Տէր տերանց, ԱԾ աստուծոց, Թագաւոր յաւիտենական արարիչ ամ արարածոց, Հայր Տն մերոյ Յսի Քսի, մի տար զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա 'ի չարէ, և ապրեցո 'ի փորձութենէ։

Ի ձայն։

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս։ Ամէն։

Քահանայն։

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան։

Ժողովուրդն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Սրկգն։ Այ երկրպագեսցուք։
Ժողովուրդն։ Առաջի քո Տէր։

Քահանայն խոնարհեսցի և ամ ժողովուրդն ընդ նմա 'ի վայր. և քահանայն աղօթեսցէ 'ի ծածուկ։

Որ աղբիւրդ ես կենաց, և բղխումն ողորմութե Հոգւոյդ սրբոյ, ողորմեա ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիրպագանեն ածութեանդ քո։ Պահեա զսոսա ամբողջ։ Տպաւորեա յոգւոջ սոցա զձև մարմնոյ ցուցակի առ 'ի ժառանգութի և 'ի վիճակ հանդերձելոց բարեաց։

Ի ձայն։

Քսիւ Յսիւ Տեառն մերով, ընդ որում քեզ Հոգւոյդ սրբոյ և Հօր ամենակալի վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Եւ քահանայն առեալ զսուրբ հացն 'ի ձեռն, Սրկգն ձայնեսցէ բարձր։

Պռոսխումէ։

Եւ քահանայն բարձրացուսցէ առներև ժողովրդեանն՝ և ասասցէ։

Ի սրբութիւն սրբոց։

Ժողովուրդն բարձր ձայնիւ։

Միայն սբ, միայն Տր, Յս Քս, 'ի փառս Այ Հօր։ Ամէն։

Քահանայն։

Օրհնեալ Հայր սբ ԱԾ ճշմարիտ։
Ժողովուրդն։ Ամէն։

Քահանայն։

Օրհնեալ Որդին սբ ԱԾ ճշմարիտ։
Ժողովուրդն։ Ամէն։

Քա

Քահանայն։

Օրհնեալ Հոգիդ ՚որ Ս. Ճշմարիտ։
Ժողովուրդն։ Ամէն։

Քահանայն։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Դպիրքն։ Հայր ՚սբ, Որդի։

Եւ մինչ նք երգիցեն զայս, քահանայն խոնարհեսցի, և աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Նայեա՛ց Տէր մեր Յսս Քսս յերկնից ՚ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութեան քո։ Եկ ՚ի սրբել և ՚ի կեցուցանել զմեզ. որ ընդ Հօր նստիս, և աստ պատարագիս։ Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ, և ՚ի պատուական յարենէ. և ՚ի ձեռս մեր ամ՟ ժողովրդեանս։

Եւ զայս ասացեալ երկրպագեսցէ և համբուրեսցէ զսեղանն, և առեալ զսբ մարմինն ողջ թացցէ յանարատ արիւնն, և ասասցէ։

Տէր Ա.Ծ. մեր, որ կոչեցեր զմեզ յանուն միածնի Որդւոյ քո քրիստոնեայս, և շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգևոր աւազանաւն ՚ի թողութիւն մեղաց, և արժանի արարեր զմեզ հաղորդել ՚սբ մարմնոյ և արեան միածնի քո։ Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէր, արա զմեզ արժանի ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ ՚ի մեղաց թողութիւն։ Եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ՚սբ Հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Եւ բարձրացուսցէ ակներև ժողովրդեանն, և ասասցէ առ նա բարձր։

Ի ՚սբ ՚ի ՚սբ պատուական մարմնոյ և յարենէ Տն մերոյ և փրկչին Յսի Քսի, ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ ՚ի յերկնից բաշխի ՚ի մէջի մերում։ Սա է կեանք ✠, յոյս, յարութիւն, քաւութիւն, և թողութիւն մեղաց։ Սաղմոս ասացէք Տն Այ մերոյ, սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի ՚ի կառս քերովբէականս։

Սարկաւագն ձայնեսցէ բարձր։

Սաղմոս ասացէք Տն Այ։

Դպիրքն եղանակեսցեն։

Քս պատարագեալ բաշխի։

Մինչ նք երգիցեն, քահանայն առցէ զմարմինն ՚ի ձեռն, և համբուրեսցէ արտասուօք ասելով զայս։

Զո՞ր օրհնութիւն, կամ զո՞ր գոհութիւն ՚ի վր հացիս և բաժակիս ասասցուք, այլ Յս զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հօրդ և ամենասուրբ Հոգւովդ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Դպր-

Դարձեալ ասասցէ ։

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես Ք՟ս որդի Ա՟յ, որ բարձեր զմեղս աշխարհի ։

Եւ բերեալ արկցէ 'ի բաժակն արեան՝ ասելով ։

Լրումն Հոգւոյն սրբոյ ։

Եւ ապա առեալ զմի մասն 'ի ձեռն իւր, ասասցէ 'ի ծածուկ արտասուօք և գոհութեամբ առ Ա՟յ ։

ՀԱՅՐ 'որ, որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ միածնի քո, և լուսաւորեցեր մկրտու՟թ հոգևոր աւազանին ։ Արժանի արա ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն ։ Տպաւորեա 'ի մեզ զշնորհս Հոգւոյդ սրբոյ՝ որպէս 'ի 'որ առաքեալսն, որք ճաշակեցին. և եղեն մաքրիչք ամ՟ աշխարհի ։ Եւ արդ՝ Տէր Հայր բարերար՝ զհաղորդութիս զայս մասնաւորեա ճաշակման երեկոյին աշակերտացն՝ բառնալով զխաւար մեղաց իմոց ։ Մի հայեր յանարժանութիւնս իմ. և մի արգելուր զշնորհս Հոգւոյդ ոյդ ։ Այլ ըստ անբաւ մարդասիրութեան քո, պարգևեա զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց ։ Որպէս խոստացաւ և ասաց Տէր մեր Յ՟ս Ք՟ս, թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեան ։ Արդ՝ արա զսա մեզ 'ի քաւութիւն, զի որք կերիցեն և արբցեն 'ի սմանէ, հանցեն զօրհնութիւն և ըզփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Խաղաղութիւն ✠ ը՟ ամենեսեան ։

Գոհանամ զքէն Ք՟ս Թագաւոր, որ արժանի արարեր զիս զանարժանս հաղորդել 'ոք մարմնոյ և արեան քո ։ Եւ այժմ Տէր աղաչեմ՝ զքեզ, մի լիցի սա ինձ 'ի դատապարտութիւն, այլ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց, յառողջութիւն հոգւոյ և մարմնոյ, և 'ի կատարումն ամ՟ գործոց առաքինութեան ։ Որպէս սրբեսցէ սա զշունչս իմ, զհոգի և զմարմին իմ. և արասցէ զիս տաճար և բնակարան ամենասուրբ Երրորդութեանդ ։ Զի ընդ 'որս քո արժանի եղէց փառաւորել զքեզ 'ը Հօր և 'ը սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Յովհաննու ոսկեբերանին ։

Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ Տէր Ա՟Ծ իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուրս յայսմիկ՝ հաղորդակից լինել 'ոծայլին և սոսկալի խորհրդոյ քո, անարատ մարմնոյդ և պատուական արեանդ ։ Այսուհետև զսոսա 'ի բարեխօսութիւն ունելով, աղաչեմ՝ յամ՟ աւուրս և 'ի ժամանակս կենաց իմոց՝ ընդ սրբութեան քո պահեա զիս ։ Որպէս յիշելով զբարեգթութիս քո, և կենդանի լինել ընդ.

ընդ քեզ՝ որ վ՜ա մեր չարչարեցար և մեռար և յարեար։ Այն մերձեցի Տ՛ր իմ՝ և Ա՛ծ խորտակիչն՝ կնքելով անձին իմոյ պատուական արեամբդ քով։ Ամենակարող մաքրեա զիս ողբոց յամ մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ։ Ամրացո զկեանս իմ Տ՛ր յամ փորձութե. և զպատերազմողն իմ՝ դարձո յետս պատկառեալ և ամաչեցեալ, որչափ յառնէ ՛ի վերայ իմ։ Ամրացո զգնացս մտաց և լեզուի իմոյ, և զամ ճանապարհս մարմնոյ իմոյ։ Եւ հանապազորդ ՛ը իս ՛ը անսուտ խոստմանցդ քոց, թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ՝ և ես ՛ի նմա։ Դու ասացեր մերդաւեր, կացո զբանս ածային անլուծանելի հրամանաց քոց։ Քանզի դու ես Ա՛ծ ողորմութե և գթութե և մարդասիրութե, և պարգևիչ ամ բարեաց. և քեզ վայելէ փառք հանդերձ Հօրդ և ամենասուրբ Հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Եւ ապա ննջեցուցէ զինքն, և խնդրեսցէ ՛ի ճշմարտէն Ա՛յ զպէսպէս հոգցումածս անձին իւրոյ՝ և ժողովրդեան և աշխարհի. և թողութի խնդրեսցէ իւրոց յանցանացն թշնամեաց և ատելեաց։ Եւ անդէն ահիւ և դողութի ճաշակեսցէ ՛ի մարմնոյն, և արբցէ ՛ի բաժակէն՝ ասելով։

Մարմինն քո անապական լիցի ✠ ինձ ՛ի կեանս, և ՛որ արիւն քո ՛ի քաւութի և ՛ի թողութի մեղաց։

Եւ թէ սարկաւագ կայցէ, հաղորդեսցի և նա։ Եւ ապա սարկաւագն զսկիհն, և դարձցի առ ժողովուրդն ասելով բարձր։

Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք։

Ժողովուրդն ասասցէ բարձր ձայնիւ։

Ա՛ծ մեր և Տ՛ր մեր երևեցաւ։

Եւ հաղորդեսցի ՛որ ձեռնադրեալն, բայց ոչ ՛ի բեման, այլ ՛ի յափն տալով զորութիւնն։ Եւ ամ արժանաւոր ժողովուրդն հաղորդեսցին։ Եւ յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն։ և ասասցէ բարձր։

Փրկեա Տ՛ր ✠ զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, հովուեա և բարձրացո զոսա՝ յայսմ՝ հետէ մինչև յաւիտեան։

Եւ յետ հաղորդութեն երգեսցեն։

Լցաք ՛ի բարութեց քոց Տ՛ր։

Քահանայն։

Գոհանամք զքեն Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ ՛որ եկեղեցի, տաճար սրբութե, ուր փառաւորի ՛որ Երրորդութիւն։ Ալէլուիա։

Գոհանամք զքեն Քրիստոս թագաւոր, որ պարգևեցեր մեզ կենդանութի կենարար մարմնով և արեամբդ քով սրբով։ Ալէլուիա։ Գոհանամք զքեն Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր ՛որ զեկեղեցի. անարատ պահեա հաւատով Եր-

րոր-

բորբոքութեամբ՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան ։ Ալէլուիա ։

Մհգն ։ Եւ ես խաղաղ ։ Եւ ես հաստատեալ ։

Փոխերգն ։ Գոհանամք զքեն ։

Եւ քահանայն ասասցէ ՚ի ծածուկ ։

Գոհանամք զքեն Քս ԱԾ, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ՚ի սրբութիւն կենդանութեան ։ Սովիմք պահեա զմեզ սուրբ և անարատս բնակեալ զմեօք քո ածային խնամովքդ ։ Արածեա զմեզ յանդաստանի կամացդ քոց սրբոց, և բարերարաց ։ Որով ամրացեալք յամ բանսարկուին ընդդիմութեանց, քումդ ենեթ արժանի եղիցուք լսել ձայնի ։ Եւ քեզ միայնոյ քաջայաղթ, և ճշմարիտ հովուիդ հետևել, և առ ՚ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից ։ ԱԾ մեր և Տր և փրկիչ Յս Քս ։ Որ ես օրհնեալ ընդ Հօր, և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Խաղաղութիւն ✠ ՚ը ամենեսեան ։

Անքննելին անհաս երրեակ էութեանդ, հասարակ ընդունողդ և անբաժանելի միասնականդ որ Երրորդութեանդ, վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Եւ երկրպագեալ համբուրեսցէ զսեղանն ։ Եւ իջեալ ՚ի մէջ եկեղեցւոյն, ասասցէ զաղօթս ։

Դ. ձայն ։



Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ Տր, և սրբես զյուսացեալս ՚ի քեզ ։ Կեցո՛ զժողովուրդս քո, և օրհնեա՛ զժառանգութիւն քո ։ Զլրումն եկեղեցւոյ քո պահեա՛ ։ Սրբեա՛ զսոսա, որք սիրեցին զվայելչութիւն տան քո ։ Դու զմեզ փառաւորեա՛ ածային զօրութեամբ քով ։ Եւ մի թողուր զյուսացեալսս ՚ի քեզ ։ Զխաղաղութիւն քո պարգևեա՛ ամ աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, և զինուորեալ մանկանց նց, և ամ ժողովրդեանս ։ Զի ամ տուրք բարիք, և ամ պարգևք կատարեալք ՚ի վերուստ են իջեալ առ ՚ի քէն, որ ես Հայր լուսոյ ։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Եւ ժողովուրդքն ասասցեն երեք անգամ ։

Եղիցի անուն Տն օրհնեալ յայժմ ։

Եւ քահանայն դարձցի ՚ի վերայ ժողովրդեանն՝ ասելով ։

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես Քս փրկիչ մեր ։ Որ լցեր զամ հայրական տնօրէնութիւս քո ։ Լցո՛ և զմեզ Հոգւովդ քով սրբով ։

Աստ

ԼԿ

Մեղեդն ։ Ալէլուիա Օրթի ։

Քահանայն

Խաղաղութիւն ✠ ամենեցուն ։
Ժողովուրդն ։ Եւ ընդ հոգւոյդ ․ Են ։

Քահանայն ։

Սրբոյ աւետարանիս որ ըստ Յովհաննու ։

Ի Հօրէն լուսոյ ։

Ի սկզբանէ էր բանն ․ և բանն ։

Ժողովուրդն ։ Փառք քեզ Տէր Աստուած մեր ։

Սարկաւագն ։ Ահ խաչիւ ․ Են ։

Քահանայն ։

Պահպանեա զծառայս քո ։

Եւ դպիրքն ասասցեն զսաղմոսն ։

Օրհնեցից զՏէր յամ՛ ժամ՛, յամ՛ ժամ՛ օրհնութիւնք 'ի բերան իմ ։

Եւ ապա բաշխեսցէ նշխար ժողովրդեանն ։ Յաւարտմանն ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ ։

Եւ քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր ։

Օրհնեալ ✠ եղերուք 'ի շնորհաց որ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ ․ և Տէր եղիցի ը՛ ձեզ ընդ ամենեսեան ։ Ամէն ։

Եւ դարձցի յարևելս, երկրպագեսցէ առաջի սեղանոյն ․ և ասասցէ ։

ՏԷ Ա՛Ծ Յս Քս ողորմեա ինձ ։

Եւ մտեալ 'ի սարկաւագարանն մերկասցի 'ի զգեստուցն ։ Ելեալ առաջի սեղանոյն, երկրպագեսցէ երիցս, և երթիցէ խաղաղութեամբ ։



Ալէլուիայք ճաշու Զատկի շաբաթուն և բովանդակ Յինանց

կեր Գովեա Երուսաղէմ զՏէր. և օրհնեա զԱ՟Ծ քո Սիովն։

ԲՀ Գովեա Երուսաղէմ զՏէր. և օրհնեա զԱ՟Ծ քո Սիովն։

ԴՀ Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։

ԴՀ Քեզ վայելէ օրհնութիւն Ա՟Ծ ի Սիովն. և քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ։

ԵՀ Տէր ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լերան սուրբ քո։

ԴՀ Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած։

ՀԸ Ցնծացէք առ Ա՟Ծ օգնական է մեր. աղաղակեցէք առ Ա՟Ծ Յակոբայ։

Ալէլուիայք ճաշու Համբարձման։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից՝ և մտցէ թագաւոր փառաց։

Համբարձաւ Ա՟Ծ օրհնութեամբ, և Տէր մեր ձայնիւ փողոյ։

Ալէլուիայք ճաշու Հոգւոյն սրբոյ։

կեր Ողորմութեամբ Տն լի եղև երկիր. և բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամ զօրութիւնք նոցա։

ԲՀ Եկայք ցնծասցուք ի Տր. աղաղակեսցուք առ Ա՟Ծ փրկիչ մեր։

ԴՀ Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տն ամ երկիր. երգեցէք Տն և բարձր արարէք զանուն նորա։

Ողորմեա ինձ Տր. զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։ ԵՀ

Օրհնեա Տր զԴաւիթ, և զամենայն հեզութիւն նորա։ ԴՀ

Յեկեղեցիս օրհնեցէք զԱ՟Ծ. և զՏր յաղբերացն Իսրայէլի։ ՀԸ

Դու յարուցեալ գթասցիս ի վր Սիովնի. ժամանակ գթալոյ նր հասեալ է ժամ։ կեր

Ալէլուիայք ճաշու Յարութեան։

Դու յարուցեալ գթասցիս ի վր Սիովնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։ աձ

Թագաւոր մեծ ի վր ամ երկրի Ա՟Ծ է. սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ։ կՁ

Օրհնեցէք զՏր յօրհնութիւն նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։ ակ

Ծափս հարէք ամ հեթանոսք. աղաղակեցէք առ Ա՟Ծ ի ձայն ցնծութեան։ բձ

Ա՟Ծ դու դարձեալ կեցուցանես զմեզ. և ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ։ կՁ

Արի Տր Ա՟Ծ իմ ի հրամանս քո, զոր պատուիրեցեր. և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքև. վսն ի բարձունս դարձ Տր։ բկ

Ուրախ եղև Իսրայէլ յարարիչ իւր. և որդիք Սիովնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց։ գձ

Եկայք և տեսէք զգործս Ա՟Ծ. ոպ զի ահեղ են խորհրդով քան զամ որդւոց մարդկան։ գկ

ԼԲ

դձ Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և
դարձուցեր զգերութիւն Յակոբայ։
դկ Յարեաւ ԱԾ, և ցրուեցան ամ
թշնամիք նորա. փախեան ատե-
լիք նորա յերեսաց նորա։

Ալէլուիայք ճաշու Վարդա-
վառին.

ԲՀ Բարձրութիւնք լերանց նորա են,
Նր է ծով՝ և նա արար զնա, և
զցամաք ձեռք նորա ստեղծին.
եկայք երկրպագեսցուք նմա. անկ-
ցուք և լացցուք առաջի Տն արար-
չին մերոյ։

Ալէլուիայք ճաշու Վերա-
փոխման.

Արի Տէր 'ի հանգիստ քո. դու
և տապանակ կտակի սրբութեան քո։

Ալէլուիայք ճաշու Նաւակա-
տեաց Խաչի, և Եկեղեցւոյ.

ՀԲ Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո.
և զտեղի յարկի փառաց քոց։
կեր Տուր զօրութիւն ծառայի քո.
կեցո զորդի աղախնոյ քո. և արա՛
առ իս նշան բարութեան։
ԲՀ Սուրբ երկիւղածաց քոց նշան.
զի ապրեսցին յերեսաց աղեղան։
ԳՀ Օրհնեաց Տէր զՍիոն. և ընտրեաց
բնակել 'ի նմա. ասէ՝ այս է հան-
գիստ իմ յաւիտեանս յաւիտե-
նից 'ի սմա բնակեցայց. զի հա-
ճեցայ ընդ սա։
ԳՀ Տէր 'ի տաճար սր իւրում, Տէր
յերկինս յաթոռ իւրում։
ԿՀ Որպէս սիրելի են յարկք քո Տէր
զօրութեանց. ցանկայ՝ և փափագի
անձն իմ 'ի գաւիթս քո. սիրտ
իմ, և մարմին իմ ցնծացէ առ
ԱԾ կենդանի։

Սուրբ երկիւղածաց քոց նշան. ԳՀ
զի ապրեսցին յերեսաց աղեղան։
Որպէս փրկեսցին սիրելիք քո. ՀԲ
կեցո՛ աջով քո. և լուր մեզ։

Ալէլուիայք ճաշու աւուրց պա-
հոց. որք ասին ըստ ձայնից.

Հոգի քո սբ և բարի առաջնոր- աձ
դեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։
Վասն անուան քո Տէր կեցուսցես կմ
զիս. արդարութեամբ քով հանցես
'ի նեղութենէ զանձն իմ։
Տէր՝ մի՛ սրտմտութեամբ քով յան- ակ
դիմաներ զիս. և մի՛ բարկութեամբ
քով խրատեր զիս։
Զգնացս իմ՝ ուղիղ արա ինձ կմ
ըստ բանի քում, և մի տիրես-
ցեն ինձ ամ մեղք։
Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եր- բձ
կիւղ մահու անկաւ 'ի վր իմ։
Դարձ Տէր և փրկեա զանձն իմ. բկ
կեցո զիս Տէր ըստ ողորմութեան
քում։
Վասն անուան քո Տէր քաւեա գձ
զմեղս իմ, զի բազում եղեն
յոյժ։
Ողորմեա ինձ Տէր. զի հիւանդ գկ
եմ ես. բժշկեա զանձն իմ, զի
խռովեցան ոսկերք իմ։
Յիշեա Տէր զգթութիւնս քո և զողոր- դձ
մութիւնս քո՝ որք են յաւիտենից։
Զմեղս մանկութեան իմոյ և զան- կմ
գիտութեան մի յիշեր. այլ յիշեա
զիս Տէր ըստ ողորմութեան քում
վա քաղցրութեան քո. զի քաղցր
և ուղիղ ես։
Տէր ողորմութիւն քո յաւիտեան, դկ
զգործս ձեռաց քոց մի անտես
առներ։

Զմեղս

Զմեղս մանկութեան իմոյ և զանգիտութեան մի՛ յիշեր. այլ յիշեա զիս Տր ըստ ողորմութեան քում վասն քաղցրութեան քո. զի քաղցր և ուղիղ ես։

Աղաղակեցի առ քեզ Տր, և ասացի՝ դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

## Ալէլուիայք առաջից Նաւակատեաց։

Աղաղակեցէք առ Տր ամ երկիր. ծառայեցէք Տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծանիրուք զի նա է Տր Այ մեր։

## Ալէլուիայք Ճաշու Հրեշտակապետաց։

Ողորմութեամբ Տն լի եղև երկիր. և բանիւ Տն երկինք հաստատեցան. և հոգւով բերանոյ նր ամ զօրութիւնք նոցա։

## Համօրէն Մարգարէից։

Յեկեղեցիս օրհնեցէք զԱծ և զՏր յաղբերացն Իսրայելի։

## Դաւթի մարգարէին։

Երդուաւ Տր Դաւթի ճշմարտութեամբ, և ոչ ստեաց նմա. ի պտղոյ որովայնի նր նստուցանից յաթոռ նորա։

## Ամենայն Առաքելոց։

Կացուցես զնսա իշխանս ընդ ամ երկիր. և յիշեսցի անուն քո ընդ ամ ազգս ազգաց։

Ընդ ամ երկիր ել բարբառ նց. և մինչև ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

## Նախահարցն։

Պատմէ զբան իւր Յակոբայ. զարդարութիւն և զիրաւունս Իսրայելի։

## Գրիգորի Լուսաւորչին։

Համբերելով համբերի Տն, և նայեցաւ առ իս, և լուաւ աղօթից իմոց։

## Հայրապետաց և Վարդապետաց։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

## Ճգնաւորաց։

Երանելի են որք բնակեալ են ի տան Տն, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։

## Կուսանաց։

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։

Տարցին թագաւորի կուսանք ըզհետ նորա. և զընկերս նր տարցին նմա։

## Թագաւորաց։

Տր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։

## Քառասնից՝ և Երկուց բիւրուց։

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր. և հաներ զմեզ ի հանգիստ։

Ալէ

Խ

Աւելուածք ձայնու Մարտիրոսաց ։

ա՜ Տէր սիրէ զիրաւունս, եւ ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր. այլ յաւիտեան պահէ զնոսա ։

կժ Փրկութիւն արդարոց ՚ի Տեառնէ է. վերակացու է նոցա ՚ի ժամանակս նեղութեան ։

ակ Պարծեսցին սուրբք փառօք. եւ ցընծասցեն ՚ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զԱ՛ծ բերանովք իւրեանց ։

կժ Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց սրտից եղեւ ուրախութիւն ։

ր՜ Պարծեսցին սուրբք փառօք. եւ ցնծասցեն ՚ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զԱ՛ծ բերանովք իւրեանց ։

Խնդասցեն արդարքն առ Տէր. եւ Տէր լուսաւ նոցա. յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա ։ բկ

Վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպ զոչխար ՚ի զենումն ։ դ՜

Ուրախ լիցին ամենեքեան որք յուսացեալ են ՚ի քեզ. յաւիտեան ցնծասցեն. եւ բնակեսցես դու ՚ի նոսա ։ դկ

Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցեն. որպ զմայրսն Լիբանանու բազումք եղիցին ։ դ՜

Բազում նեղութիւնք են արդարոց յամենայնէ փրկէ զնս Տէր. եւ պահէ զամ ոսկերս նոցա. եւ մի ՚ի նոցանէ ոչ կորիցէ ։ դկ

